

սին, որ այցելութեան զնայ իր մօրաբորջ գտեր Եղիսաբեթի մօտ :

Այնքեարիմի հայ եկեղեցւոյն եւ վանքին ուսումնասիրութեան առթիւ, մեր ձեռք հասած հայերէն յիշատակարանները զնելէ յառաջ, զլիսաւոր օտար ուղեորաց տեղագրութեան եւ հնախօսութեան ամփոփոյքը կը փութամք քաղել վերոգրեալ աշխատասիրութեանէն (էջ 127-166) և կը զնենք հօս, նոյն վանքին և եկեղեցւոյն նկարագրութեան ամբողջութիւնը լրացուցած ըլլալու համար :

### 3. Զանազան ժամանակի օտար ուղեգիրներու վկայութիւնները Այնքեարիմի հայոց վանքին ու եկեղեցւոյն նկատմամբ .

Այն բոլոր օտար ուղեորներէն, որոնք այցելած և ուղեգրած են իրենց ծանօթութիւնները, ոչ մին կը յայտարարէ թէ նոյն հաստատութիւնները խաչակրաց կողմէն շինուած ըլլան . և կ'ընդունին թէ՛ նոյն վանքն ու եկեղեցին խաչակրաց թուականէն շատ յառաջ շինուած են, միայն ցաւովի է ըսել թէ բացի մէկէն, զոր պիտի յիշենք, խորհրդաւոր լուծեամբ մը, չեն խօստովանիր թէ Այնքեարիմի նոյն հաստատութիւնները հայեցի հնադարեան և հոյակապ հիմնարկութիւններ են՝ որոնց կը վկայեն հայերէն յիշատակարաններ, ինչպէս որ պիտի տեսնենք : Նոյն հաստատութիւնները, իբր հաստակառոյց եւ զարմանալի կոթողներ եւ հայ ճարտարապետութեան գլուխ գործոցներ, Ս. Երկրին մէջ, չեն ունեցած իրենց հաւասարը :

#### Վկայութիւններ օտար ուղեգիրներէ .

Ա. Սեբաստիոյ Պետրոս եպիսկոպոսէն յետոյ, 530 ին, նոյն վանքն ու եկեղեցին կը յիշատակէ Թեոդոս Աւագ Սարկաւազը, որ այցելած է Այնքեարիմ եւ ծանօթագրած է զայն հետեւեալ կերպով . « Երուսաղէմէն մինչև Յովհ. Մկրտչի մօր՝ Եղիսաբեթի բնակած տեղը, հինգ մղոն կը հաշուուի » : Երուսաղէմէն Այնքեարիմ հեռաւորութեան ճիշդ չափն է այս :

Բ. 808 ին, պաշտօնակալ շափն անձնաւորութիւն մը որ Երուսաղէմի և շրջակայ վանքերու և քահանայից վիճակագրութեան